«Յամի Տեառն 1893, և Հայկական 1385. ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տ. Մկրտչի, անօրէնութեամբ առաջնորդի թեմիս Մեսրովբ արք եպիսկոպոսի Սմբատեանց շինեցաւ կաթուղիկէն վանիցս վեց հարիւր ռուբլի տրօք բագուարբ-նակ պարոն Նիկոլայի Ստեփանեան Թադոսեանց ի յիշատակ հանգուցեալ Մարիամու դստեր Հօրեղբօր իւրոյ հանգուցեալ Զաքարիայի Թադոսեանց»։

Ներկայ 1893 թուին սալահատակել տուեցի վանքի տաճարի մէջը, որ կարևորն էր։ Կարևոր եկեղեցական դարդուց մին և նշանաւորն է և սեղանոյ Խաչկալն, որոյ համար ևս կարգադրութիւն արեցի շինելու, և Աստուծով այն ևս միւս տարին կը պատրաստուի։

Մնաց ամենակարևորաց մին՝ վանական դպրոցի շինութիւնը և բարեկարգութիւնը, որ յարգոյ Բուդաղեան եղբարց գործն է և պարտքը, որոց հետ խօսելու և խորհելու համար ուղարկեցի վանքի վանահայր Ստեփաննոս վարդապետին՝ ըստ որում դպրոցի հիմնադիր և բարերար հոգաբարձուն նոքա Բուդաղեանքն են, և Բուդաղեան անունով է կոչւում դպրոցը, ինչպէս դրբիս մէջ յիշուած է ընդարձակ իւր տեղում։

Սաղիանի վանքի առաջնորդաց (վանահարց) ցուցակից, որ նոյն է Զիրուանայ երկրի առաջնորդաց, և Սաղիանի վանքի արձանագրութիւններից երևում է, որ ինչպէս Աղուանից աշխարհի բոլոր վանքերը, նոյնպէս և Սաղիանի վանքը հիմնարկուած է Մեսրովբ թարգմանչից փրկչական 410 թուականից՝ և շինուած Աղուանից թագաւորներից և իշխաններից, և յատկապէս այն տեղերումն՝ ուր և Եղիշէ առաքեալը Քրիստոսի 50 թուին և Գրիգորիս առաջին կաթուղիկոսն Աղուանից